ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1983 թ. հունվարի 6)

«Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Սիրեցյալ ժողովուրդ մեր որ ի Հայաստան և որ ի ափյուռս աշխարհի,

Մարդասերն Աստված այս տարի ևս օրհնում է աշխարհը համայն մեծ ավետիսովը Իր միածին Որդու, Հիսուսի Քրիստոսի ծննդյան: «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ մինչև զՈրդին իւր միածին ետ, զի ամենայն որ հաւատայ ի նա, մի կորիցի» (Յովհ. Գ 16):

Քրիստոսի ծննդյան ոգեկոչումը տոնախմբումն է խաղաղության և մարդկանց եղբայրության, զի երկնային տնօրինությամբ բոլոր մարդիկ կոչված են համերաշխ ապրելու, միմյանց հանդեպ բարի կամեցողությամբ, իբրև հարազատ եղբայրներ, իբրև որդիները միևնույն երկնավոր Հոր:

Շատ դարեր առաջ սպասված Փրկչի՝ Մեսիայի գալուստը, Եսայի մարգարեն գուշակել էր, վկայելով թե նա պիտի գա և պիտի լինի «Տէրը խաղաղութեան և նրա խաղաղութիւնը վախճան չի ունենալու» (Եսայի Թ 5—6): Եվ երբ ժամանակը իր լրումին հասավ, նոր Մեսիան Փրկիչը Հիսուս, ծնավ ի Բեթղեհեմ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» պատգամով: Իսկ առաքյալներից, Մեծն Պողոս պատգամեց Եփեսոսում բնակվող իր հետևորդներին՝ «Դուք որ երբեմն հեռու էիք մեկդ մյուսից, այժմ Հիսուսի Քրիստոսի մեջ մերձավոր եք դարձել արյամբը Քրիստոսի: Որովհետև նա է մեր խաղաղությունը, նա, որ երկու տեսակ մարդկանցից արեց մեկ, քանդելով միջնորմը, որ բաժանում էր նրանց, վերացնելով թշնամությունը» (Եփես. Բ 13—18), «աղաչում եմ ձեզ, արժանի եղեք ձեր կոչումին ամենայն խոնարհությամբ և հեզությամբ և համբերատարությամբ, ներողամիտ լինելով մեկդ

մյուսիդ սիրով և փութալով պահպանել հոգվո միաբանությունը խաղաղության կապով» (Եփես. Դ 1—3):

Այսպես ահա, Հիսուսի մարդեղությունը և ծնունդը աստվածային տնօրինություններ եղան ի խնդիր մարդկային աշխարհի համերաշխության և խաղաղության, մարդկանց միջև փոխադարձ հաճության ճանապարհով: Քրիստոնեական ըմբռնումով, խաղաղության առաջին քայլը պետք է առնվի մեզանից ամեն մեկի հոգու մեջ, բարի կամեցողությամբ մեր նմանների հանդեպ: Խաղաղության կենսագործման ճանապարհի վրա, առաջին հաղթանակը, հաղթանակն է եղբայրսիրության ու մարդասիրության և հաղթահարումը մարդկային անհատական եսակենտրոն կրքերի՝ ագահության, փառատենչության, նախանձի, ատելավառ ոգու և նման վատառողջ մղումների, որոնք քայքայում են ու այլասերում մարդու մարմինն ու հոգին և քառսի են վերածում հասարակական կյանքը: Այս բոլոր թունավոր արմատները մեր սրտից ու հոգուց դուրս պոկելով միայն, հնարավոր կդառնա մեր նմանների հետ հաշտ ու խաղաղ ապրելը փոխադարձ հաճությամբ: Եվ այդ հիմքի վրա միայն կարող են զարգանալ նաև արդար ու խաղաղ հարաբերություններ մարդկանց հավաքականությունների, ազգերի և պետությունների միջև:

Ավա՜ղ, սակայն, որ հաճախ աշխարհի մարդիկ մոռացության տալով երկնառաք պատվիրանները և գերի դառնալով իրենց վատառողջ մղումներին, անցնող դարերի պատմության ճանապարհները շատ անգամներ ողողվել են մարդկային արյան հեղեղներով և անասելի տառապանքներով: Բազում ազգերի կյանքի բաժինը եղել է՝ ստրկություն և հարստահարություն, հալածանք, բռնագաղթ և նույնիսկ կոտորած: Դարեր շարունակ այս է եղել նաև ճակատագիրը մեր ազգի, իր իսկ սեփական հայրենի հողի վրա:

Այո՛, հույժ ողբերգական է եղել մարդկային պատմության ուղին, ի դըժբախտություն բոլոր մեծ և փոքր ազգերի, գրեթե անխտիր:

Եվ մեր օրերին էլ, ժողովուրդների գլխին դամոկլյան սրի պես կախված է մնում սպառնալիքը նոր արհավիրքների, նոր բնաջնջումների, նոր պատերազմների, այս անգամ առավել ահարկու զենքերի օգտագործումով:

Մեր Մայր Եկեղեցին, Տիրոջ Սուրբ Ծննդյան ավետիսով հորդոր է կարդում նախ մեզանից ամեն մեկին՝ ապրել հաշտ ու խաղաղ մեր նմանների հետ մեր ընտանեկան հարկի տակ, մեր աշխատանքի վայրերում, մեր ընկերային կյանքում, մեր Աղոթքի Տներից ներս, մեր ազգային հայրենական կյանքում:

Մենք կոչ ենք անում բոլորիդ, որ իբրև Հայ Եկեղեցու զավակներ, ձեր կրոնական համայնքային կյանքում, ձեռք-ձեռքի տված, միասնաբար ընթանաք խաղաղ գործակցության ճամփով, հառավել ամրապնդումն ներքին միասնության, հառավել շինություն հայ հոգևոր, բարոյական և ազգային կյանքի:

Հրավիրում ենք նաև բոլորիդ, որ նույն խաղաղարար ոգով, ձեզանից ամեն մեկը իր դիրքերից և իր միջոցներով, նեցուկ ու պաշտպան կանգնի աշխարհի խաղաղության նվիրական գործին, վասն համերաշխ գոյակցության ու գործակցության երկրագնդիս ազգերի և պետությունների:

Մեր օրերին այնպիսի սարսափազդու չափերի են հասել պատերազմի զենքերը, սպառազինումները և մանավանդ միջուկային ռումբերի կուտակումները, որ անկարելի է հաշտվել որևէ հնարավոր մի պատերազմի գաղափարի հետ:

Քրիստոսի Եկեղեցիները բոլոր, մենք՝ Աստուծո Սեղանի բոլոր սպասավորներս, առաջին հերթին մեր պարտքն ենք նկատելու, ընդդիմանալ պատերազմին և աղոթել ու գործել վասն խաղաղության: Ընդդիմանալ պատերազմին՝ նշանակում է հպատակվել Աստուծո կամքին:

Հայաստանյայց Եկեղեցին և մենք՝ բոլոր հայերս, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, առավելապես մենք այս պետք է աղոթենք ու գործենք խաղաղության դատի հաղթանակի համար, որովհետև բազում դարեր շարունակ ծանրորեն ապրել ենք ողբերգությունները վայրագ արշավանքների, բռնակալ տիրապետողների և հաճախ զանգվածային կոտորածների: Ապրել ենք ահավոր ազգային աղետը 1915-ի ցեղասպանության: Այո՛, մենք՝ հայերս, չպետք է մոռանանք անցյալի դառն փորձառություններն ու մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը: Առավել քան այլ ազգեր, պարտավոր ենք տիվ և գիշեր աղոթել ու անհոգնաբեկ գործել եղբայրական ժողովուրդների և խաղաղասեր ուժերի հետ, ի խնդիր զինաթափման, ի խնդիր ատոմային ռումբերի արգելման, ի խնդիր միջազգային լարվածության թուլացման՝ արդարության լույսի տակ: Անկախ և վեր ամեն հատվածական դիրքավորումներից կամ գաղափարախոսական նկատումներից, ամեն հայ մարդ, ուր որ գտնվի աշխարհում, պարտավոր է պաշտպանը հանդիսանալու միջազգային խաղաղ գոյավիճակի, միշտ մտահոգված արդի մեր վերածնված Մայր Հայրենիքի ճակատագրով:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ». ամեն:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»: